

ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱՉԻԿՅԱՆ

ԿԵՐՊԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՇՈՒՄԵՐԵՐԵՆՈՒՄ (տիպաբանական քննություն)

Հոլովածում կներկայացվեն հեղինակի նկատառումները Մերձավոր Արևելքի (նաև աշխարհի) հնագույն մեզ հայտնի լեզուներից մեկի՝ շումերերենի կերպի բայական կարգի մասին: Մական նախքան բուն նյութին անցնելու հստակ ենք հստակում հակիրճ անդրադառնալ շումերերենի բայաձևին: Այն ներկայանում է բայարմատի և քերականական որոշակի գործառնությունով օժտված նախածանցների և վերջածանցների շղթայի տեսքով:

ա) Նախածանցների շղթայում սկզբի դիրքը զբաղեցնում էին եղանակային ցուցիչները:

բ) Եղանակային ձևություններին հաջորդում էին այսպես կոչված կողմնորոշման նախածանցները¹: Այդ ածանցների դերը լիովին պարզված չէ: Ամենայն հավանականությամբ, սակայն, նրանց միջոցով արտահայտվում էր գործողության ուղղվածությունը գործողությունը կատարողի (սուբյեկտի), գործողության օբյեկտի կամ խոսողի նկատմամբ:

գ) Հաջորդ դիրքը/դիրքերը բայաձևում պատկանում էր/էին տարածական ածանցներին, որոնք արտացոլում էին նախադասության մեջ տարբեր թեք հոլովներով արտահայտված հարաբերություններ: Այդ ածանցները բաղկացած էին նախադասության անուղղակի խնդրին/խնդիրներին համապատասխանող դերանվանական տարրից (տե՛ս աղյուսակ, սյունակ 1) և դրան հաջորդող հոլովական ցուցիչ/ցուցիչներից²:

դ) Հաջորդ՝ բայարմատին անմիջապես նախորդող դիրքը, զբաղեցնում էին մույն այն դերանվանական տարրերը, որոնք վերոնիշյալ տարածական բայածանցների մասն էին կազմում (տե՛ս աղյուսակ, սյունակ 2): Այդ դիրքում մյուսնք հանդես էին գալիս ենթակայի կամ ուլիլ խնդրի դերակատարությամբ՝ կախված բայի կերպից. կատարյալ կերպի ներգործական բայերում այդ դերանունները ենթակայի դեր էին կատարում, իսկ անկատարի դեպքում՝ ուղիղ խնդրի (այս ածանցները հատուկ չէին չեզոք սեռի բայերին):

**Շումերերեն բայի սուբյեկտային/օբյեկտային
դերանվանական ցուցիչների աղյուսակ**

	1	2	3	4
	Բայի տարածական մախանձանցի դերանվանական տարր	Ներգործական կատարյալ կերպի սուբյեկտ՝ անկատար կերպի օբյեկտ	Ներգործական անկատար կերպի սուբյեկտ	Չեզոք սեռի սուբյեկտ՝ ներգործական կատարյալ կերպի օբյեկտ
1 եզակի	-0-	-0-*/-cn**-R	R-cn	R-cn
2 եզակի	-c-	-c-*/-cn**-R	R-cn	R-cn
3 ակտիվ եզակի	-n-	-n-R	-R-c	-R-0
3 ինակտ. եզակի	-b-	-b-R	-	-R-0
1 հոգնակի	-mc-	-0-R-cndcn*/-	-R-cndcn	-R-cndcn
2 հոգնակի	-c-cnc-	-c-R-cnzcnc*/-	-R-cnzen	-
3 ակտիվ հոգն.	-cnc-	-n-R-cs*/-	-R-cnc	-R-cs
3 ինակտ. հոգն.	-	-b-R-0	-	

* Կատարյալ կերպի սուբյեկտային ցուցիչ:

**Անկատար կերպի օբյեկտային ցուցիչ:

Բայարմատին հաջորդում էր սուբյեկտու-օբյեկտային դերանվանական տարրերի մեկ, կամ, ավելի ճիշտ, ինչպես ցույց կտանք ստորև, երկու այլ շարք ևս, որը/որոնք արտահայտում էր/էին .

ա) անմեջողական (չեզոք սեռի) բայի ենթական:

բ) անկատար կերպի անցողական (ներգործական սեռի) բայի ենթական:

գ) կատարյալ կերպի անցողական բայի ուղիղ խնդիրը:

Ինչպես երևում է աղյուսակից, չեզոք սեռի բայի սուբյեկտային շարքի ցուցիչները (սյունակ 4) լիովին համընկնում էին կատարյալ կերպի անցողական բայի օբյեկտային շարքի ցուցիչների հետ: Այդ շարքի 1 և 2 դեմքի ցուցիչները համընկնում էին նաև անկատար կերպի անցողական բայի սուբյեկտային ածանցների հետ (սյունակ 3)՝ ի հստ քերելով տարբերություններ եզակի և հոգնակի 3 դեմքում (-0: -c և -eš: -ene): Այս փաստին մեծ կանդիդատանք ստորև:

Աղյուսակից երևում է, որ շումերերենի ներգործական բայածումն արտացոլվում էր նաև գործողության կերպը (կատարյալ: անկատար): Կերպային տարբերությունները, սակայն, արտահայտվում էին ոչ թե հատուկ ձևաբանությամբ, այլ առաջին և երկրորդ շարքերի խմաստի փոխադարձ փոխարինումով. կատարյալ կերպի բայերում ենթակայի լի-

մաստով հանդես էին գալիս դիմավոր նախածանցները (տե՛ս սյունակ 2), իսկ ուղիղ խնդրի իմաստով վերջածանցները (տե՛ս սյունակ 4), անկատար կերպի դեպքում այդ դերանունները փոխվում էին դերով. վերջածանցները ստանում էին ենթակայի (տե՛ս սյունակ 3), իսկ նախածանցները՝ ուղիղ խնդրի իմաստ:

Այն դեպքերում, երբ վերջածանցները հանդես էին գալիս ենթակայի դերում, նրանց կարող էր նախադրել *-ed(-)* ձևությը, որը հաղորդում էր բայաձևին եղանակային իմաստ:

Չեզոք բայի եզակի 3 դ. ձևում այդ ածանցի *-d-* բաղաձայնը, հայտնվելով բառավերջում, ընկնում էր³: Այդ անկման արդյունքում չեզոք սեռի եզակի 3 դ. բայը ձևով համընկնում էր ներգործական բայի համապատասխան ձևի հետ: Այսպիսով, տպավորություն կարող է ստեղծվել, որ ունենք ոչ թե երկու տարբեր *-e-* ձևությներ (3դ. եզակի ցուցիչ ներգործական սեռի բայերում, և *-ed-* եղանակային ածանցի սոված տարբերակը չեզոք սեռի բայերում), այլ բայարմատին անմիջապես հաջորդող մեկ *-e-* ձևությ. որը գործածվում էր թե ներգործական, թե չեզոք բայերի հետ՝ արտահայտելով անկատար կերպի իմաստ:

Շումերագլխոտության մեջ մման կարծիք, որոշ տարբերություններով, հնչեցվել է Մ. Յոսիկավայի⁴ և Թ. Յակոբսենի⁵ կողմից:

Անդրադառնալով, մասնավորապես, Մ. Յոսիկավայի տեսակետին:

Վերագրելով *-e-* ձայնավորին անկատար կերպի ցուցչի իմաստ և միաժամանակ ելնելով այն փաստից, որ կերպային տարբերություններ կարող էին արտահայտվել նաև բայարմատի մասնակի կրկնությամբ (կատարյալ ոգ: անկատար ոգ-ոգ «խմել») կամ տարարմատության միջոցով (կատարյալ ժոգ: անկատար e «ասել, խոսել»), ճապոնացի գիտնականը եկել է հետևյալ եզրակացության. կերպային տարբերությունները շումերերենում ընդգրկում էին ոչ միայն ներգործական, այլև չեզոք սեռի բայերը և արտահայտվում էին երեք տարբեր միջոցներով.

ա) քերականական ձևությի (կատարյալ -0: անկատար *-e-*);

բ/ բայարմատի կրկնությամբ (կատարյալ V: անկատար VV);

գ/ տարբեր արմատների միջոցով:

Չհամաձայնելով Մ. Յոսիկավայի հետ և հարելով շումերագլխոտության մեջ ընդունված կարծիքին ստորև կփորձենք հիմնավորել մեր տեսակետը լուրջանդակային (կոնտենսիվ) տիպաբանության տեսանկյունից⁶:

Էքսկուրս

Ի-ովանդակային տիպաբանության ուսումնասիրության առարկան կազմում են աշխարհի լեզուներում ի հայտ եկող այն եղանակները, որոնց միջոցով արտացոլվում են իրականության սուբյեկտ-օբյեկտային

հարաբերությունները: Այդ տիպաբանության շրջանակներում առանձնացնում են դասային, ակտիվ, էրգատիվ, մոմինատիվ (գրականության մեջ այն հաճախ կոչվում է մաս ակկուզատիվ) և չեզոք տիպերը: Սրանցից յուրաքանչյուրը բնութագրվում է տվյալ տիպին հատուկ իմաստային (սեմանտիկ) դետերմինանտով, որով պայմանավորված է լեզվի կառուցվածքը բոլոր մակարդակներում՝ բառային, շարահյուսական, ձևաբանական, երբեմն մասնական շարահյուսաբանական:

Կամզ չառնելով վերոհիշյալ բովանդակային բոլոր տիպերի վրա՝ հակիրճ կանդրադառնամք մոմինատիվ և, հատկապես, էրգատիվ և ակտիվ տիպերին բնորոշ հիմնական հատկանիշներին, քանի որ, ինչպես կոեսմենք ստորև, շումերերենը հանդես է բերում էրգատիվ և, մասամբ, ակտիվ տիպաբանության լեզուներին հատուկ գծեր:

1. Նոմինատիվ տիպը բնութագրվում է անցողական և անանցողական բայերի հակադրությամբ, մասնագործական ու կրավորական սեռերի հակադրությամբ անցողական բայերի համակարգում: Նոմինատիվ լեզուներում նախադասության սուբյեկտը (ենթական), անկախ բայի բնույթից, հանդես է գալիս մոմինատիվ (ուղղական), օբյեկտը (ուղիղ խնդիրը)՝ ակկուզատիվ (հայցական) հոլովով: Այդ հոլովներին համապատասխանում են սուբյեկտային (մոմինատիվ) և օբյեկտային (ակկուզատիվ) շարքերի բայական դիմավոր ձևայինները:

2. Էրգատիվ լեզուներում բայերը բաժանվում են երկու հիմնական խմբերի՝

ա) ազենտիվ բայերի, որոնք արտահայտում են ենթակայից ուղիղ խնդրին անցնող և այդ խնդիրը վերափոխող գործողություն (հմմ.՝ ջարդել՝, ‘պոկել՝, ‘սպանել՝, ‘պաստել’);

բ) ֆակտիտիվ բայերի, որոնք արտահայտում են ենթակայի վիճակը կամ մյուս մակերեսային ներգործությունը խնդրի վրա (‘աճել՝, ‘գնալ՝, ‘պարել՝, ‘չանգոել՝, ‘համբուրել՝, ‘կծել՝, ‘սպասել՝, ‘բռնել’): Ըստ էության, ազենտիվ բայերը համապատասխանում են հայերենի (որը մոմինատիվ տիպի լեզու է) ներգործական սեռի բայերին, մինչդեռ ֆակտիտիվ բայերի խումբը իր ընդգրկումով ավելի լայն է, քան մոմինատիվ լեզուների չեզոք սեռի բայերի խումբը (մոմինատիվ լեզուներում ‘չսնճել՝, ‘համբուրել՝, ‘կծել՝, ‘սպասել՝, ‘բռնել՝ բայերը դասվում են ներգործականների շարքին): Այնուհանդերձ ստորև, շումերերենի բայական համակարգը քննելիս, հարմարության մպատակով էրգատիվ լեզուների իրողությունը ավելի ճշգրիտ արտացոլող “ազենտիվ” և “ֆակտիտիվ” եզրերի փոխարեն կօգտագործենք ընդունված, քեև ոչ այնքան ճիշտ “անցողական” (կամ “ներգործական”) և “անանցողական” (կամ “չեզոք”) եզրերը:

Էրգատիվ լեզուների կարևորագույն ձևաբանական հատկանիշներից է էրգատիվ և աբսոլյուտիվ (բացարձակ) հոլովների հակադրությունը:

Լրգատիվ հոլովով, որը հաճախ համընկնում է որևէ թեք հոլովի (սեռական, տրական, յուկատիվ, դիրեկտիվ, բացառական) հետ, արտահայտվում է ազենտիվ բայերի ենթական, իսկ բացարձակ հոլովով՝ ազենտիվ բայերի ուղիղ խնդիրը և խակտիտիվ բայերի ենթական: Համապատասխանաբար Էրգատիվ լեզուների բային հատուկ է դերանվանական ածանցների երկու շարքերի (Էրգատիվ և աբսոլյուտիվ) առկայությունը:

Լրգատիվ տիպաբանության առանձնահատկություններից մշեմք մասն աշայես կոչված սնտիպասսիվ կառուցվածքի առկայությունը, որը, ինչպես կտեսնենք, իր ուրույն տեղն ունի շումերերենում: Այդ կառուցվածքի համար հատկանշական է, որ ներգործական սեռի բայի ենթական դրվում է ոչ թե Էրգատիվ, այլ աբսոլյուտիվ հոլովով, իսկ ուղիղ խնդիրը՝ ոչ թե աբսոլյուտիվ, այլ որևէ թեք հոլովով: Դա իր արտահայտությունն է գտնում մասն բայի դիմավոր ածանցների համակարգում: Իսկ քանի որ, ինչպես մշեցինք, Էրգատիվ հոլովը երբեմն համընկնում է որևէ թեք հոլովի հետ, ապա որոշ լեզուներում Էրգատիվ նախադասության ենթական սնտիպասսիվ կառուցվածքում ստանում է ուղիղ խնդրի ձևը, իսկ ուղիղ խնդիրը՝ ենթակայի:

Իմաստային առումով նախադասության Էրգատիվ կառուցվածքը անցողականության ավելի ցցուն հատկանիշներ է ի հայտ բերում, քան սնտիպասսիվ կառուցվածքը⁷: Այդ հատկանիշներից հիշատակենք միայն կատարյալ կերպը ի տարբերություն անկատարից, քանի որ կերպային տարբերությունները անմիջականորեն առնչվում են հոլովածում քննարկվող հարցին:

3. Ակտիվ տիպը բնութագրվում է ակտիվ: Ինակտիվ սկզբունքների հակադրությամբ: Համապատասխանաբար ակտիվ տիպաբանության լեզուներին հատուկ է ակտիվ ("շնչավոր") գոյականների հակադրությունը ինակտիվ ("անշունչ") գոյականներին և ակտիվ (գործողության) բայերի հակադրությունը ստատիվ (վիճակի) բայերին: Գործողության բայերի ենթակայի հոլովը (ակտիվ) հակադրվում է վիճակի բայի ենթակայի և ակտիվ բայի մերձավոր խնդրի հոլովին (ինակտիվ): Նշենք մասն, որ ակտիվ լեզուների մերձավոր խնդիրը ավելի ընդգրկում է, քան Էրգատիվ և մոմիմատիվ լեզուների ուղիղ խնդիրը և ներառում է մասնառարկայի խնդիրը:

Բայական ձևերում այդ հոլովներին համապատասխանում են ակտիվ և ինակտիվ դերանվանական շարքերը, երբեմն առանձնանում է մասնառարկային շարքը:

Ակտիվ լեզուներին հատուկ գծերից մշեմք ժամանակի քերականական կարգի բացակայությունը և կերպային տարբերությունների առկայությունը: Վերջիններս կարող են արտահայտվել ոչ թե ձևաբանական միջոցներով, այլ բառակազմական կամ սոսկ բառային: Այդ երևույթը հայտնի է Aktionsart անունով, ի տարբերություն Aspekt-ի:

Քանի որ լեզվի զարգացումը հաճախ համգեցնում է տիպաբանության վտառիության, մասնավորապես քիչ չեն ակտիվ տիպաբանության լեզուների փոխակերպման դեպքերը երգատիվի կամ նոմինատիվի, տիպաբանորեն բացարձակ անխառն լեզուներ չեն լինում: Բոլորում նշմարելի են տվյալ լեզվում գերիշխող տիպի շրջանակներում չտեղավորվող երևույթներ, որոնք, սակայն, տարածամասկյա մոտեցման դեպքում գտնում են իրենց բացատրությունը:

Վերադառնալով հոդվածի առարկային՝ նշենք, որ շումերերին հատուկ է երգատիվ հոլովի (-e) հակադրությունը արսոյտտիվ հոլովին (-0-): Նշենք նաև, որ շումերերենը պատկանում է այն լեզուների թվին, որոնցում երգատիվ հոլովը համընկնում է որևէ թեք հոլովի (տվյալ դեպքում ուղղություն արտահայտող լոկատիվ-տեղմիմատիվի հետ):

Բայական համակարգում, սակայն, երգատիվ տիպի լեզուներին բնորոշ գծերի կառքին նշմարվում են այնպիսիք, որոնք ակնհայտորեն դուրս են մնում երգատիվ համակարգից: Այստեղ, մի կողմից, ունենք երգատիվ խոնարհման հակադրությունը արսոյտտիվին (չեզոք սեռի ենթակայի դիմավոր ցուցիչները համընկնում են կատարյալ կերպի ներգործական բայի ուղիղ խնդրի ցուցիչների հետ): Մյուս կողմից, սակայն, անկատար կերպի ներգործական սեռի բայերի ենթական համընկնում է չեզոք սեռի բայերի ենթակայի հետ (բացառությամբ 3 դեմքի ձևերի, տե՛ս աղյուսակ):

Աշխարհի լեզուներում բավականին տարածված այս երևույթը, որ տիպաբանական լեզվաբանության մեջ հայտնի է split ergativity (ճեղքված երգատիվություն) անունով, սովորաբար մեկնաբանվում է որպես “ճեղքվածք” երգատիվ և նոմինատիվ տիպերի միջև: Այդպես է բնութագրվում նաև շումերերենի “ճեղքվածքը”⁸: Սակայն լեզվական տվյալների տիպաբանական քննության արդյունքում հանգում ենք այլ եզրակացության:

Մեր կարծիքով, անկատար կերպի ներգործական բայերի (տե՛ս սյունակ 3) և չեզոք սեռի բայերի (տե՛ս սյունակ 4) սուբյեկտային ածանցները չի կարելի նույնացնել (հմմ. 3 դեմքի տարբերությունները): Իսկ այն փաստը, որ չեզոք սեռի սուբյեկտային ցուցիչները հատուկ էին “լինել” (me-) բային, թույլ է տալիս ենթադրել, որ դրանք ի սկզբանե վիճակի բայի ցուցիչներ էին: Ուստի, այդ ձևայիններին հակադրված ներգործական սեռի անկատար կերպի ցուցիչները կարող ենք մեկնաբանել որպես գործողության բայի ցուցիչներ: Դրա օգտին է խոսում նաև այն փաստը, որ -ene ածանցը անվանական համակարգում հանդես է գալիս որպես ակտիվ գոյականների հոգնակերտ ձևությ⁹: Այսպիսով, այստեղ մենք ունենք ոչ թե նոմինատիվ լեզուներին հատուկ մեկ միասնական սուբյեկտային շարք, այլ ակտիվ լեզուներին բնորոշ երկու շարքեր՝ ակտիվ և ինակտիվ:

Դժվարություն չի հարուցում մահ այդ երկու շարքերի դերանվանական ցուցիչների մոյնությունը առաջին և երկրորդ դեմքերում. խոսողական ակտում թե՛ խոսողը, թե՛ խոսակիցը ակտիվ չեն չնչավորների՝ դասին են պատկանում, անկախ բայի բնության, ուստի և արտահայտվում են միևնույն դերանվանական ձևությամբ:

Իսկ քանի որ անկատար կերպի ներգործական բայի սուբյեկտային ցուցիչները պատկանում էին ոչ թե էրգատիվ, այլ ակտիվ դերանվանական ցուցիչների շարքին. այդ ցուցիչներին հակադրված օբյեկտային նախածանցները ոչ թե ուղիղ, այլ մերձավոր (այսինքն թե՛ ուղիղ, թե՛ անուղղակի) խոնդրի ցուցիչներ էին:

Այժմ տեսնենք, թե ինչպես էին միմյանց հետ հարաբերվում շումերերենի երեք բայական խոնարհումները՝ կատարյալ ներգործական, անկատար ներգործական և չեզոք:

Վերը նշվեց, որ կատարյալ կերպի ներգործական սեռի փոխհարաբերությունը չեզոք սեռի բայի հետ իր տիպաբանությամբ ակնհայտորեն էրգատիվ էր, ուստի այդ բայաձևերում հանդես եկող դիմավոր ցուցիչները պատկանում էին էրգատիվ լեզուներին բնորոշ էրգատիվ և աբսոլյուտիվ շարքերին: Միևնույն ժամանակ մենք տեսնում ենք, որ էրգատիվ շարքի ցուցիչները համընկնում էին մերձավոր խոնդրի ցուցիչների, իսկ աբսոլյուտիվ շարքի ցուցիչները՝ ինակտիվ ցուցիչների հետ: Այդ վաստը այսպես է բացատրվում. նախագրային շումերերենում տեղի ունեցած սեմանտիկ դետերմինանտի փոփոխության արդյունքում շումերերենը ակտիվ տիպաբանության լեզվից վերածվել էր էրգատիվի՝ հարմարեցնելով իր նյութական միավորները նոր բովանդակության:

Կատարյալ և անկատար կերպի ներգործական բայերի խոնարհումներում աչքի է զարնում այն փաստը, որ կատարյալ խոնարհման սուբյեկտային ցուցիչները համընկնում էին անկատար խոնարհման օբյեկտային ցուցիչների հետ, իսկ կատարյալ կերպի օբյեկտային ցուցիչները՝ անկատար կերպի սուբյեկտային ցուցիչների հետ: Այս փաստի բացատրության համար ևս պետք է նկատի առնենք, որ շումերերենի սուբյեկտային և օբյեկտային ածանցները ծագումով ակտիվ և ինակտիվ շարքերի ցուցիչներ էին, որոնք լեզվի էրգատիվացման ընթացքում կրելով որոշ բովանդակային փոփոխություններ՝ հարմարեցվել էին նոր՝ էրգատիվ համակարգին: Արդյունքում կատարյալ կերպի սուբյեկտի ցուցիչները, որ սերել էին մերձավոր (ուղիղ և անուղղակի) օբյեկտի ցուցիչներից, ստացան էրգատիվ ցուցիչների իմաստ: Դա միանգամայն տրամաբանական է, քանի որ, ինչպես վերը նշվեց, էրգատիվ հոլովը թեք հոլով է, հետևաբար էրգատիվ շարքի ցուցիչները ևս պետք է պատկանեն անուղղակի օբյեկտային ցուցիչների շարքին: Այս ենթադրությունը հաստատվում է մահ այն փաստով, որ մույն այդ ցուցիչները հանդես էին գալիս բայաձևի մեջ ներմարմնավորված անուղղակի խոնդիրների կազմում:

Իսկ քանի որ անուղղակի շարքի ցուցիչների օգտագործումը ուղիղ խնդրի իմաստով էրգատիվ լեզուներում հատուկ է անտիպասսիվ կառուցվածքին (տե՛ս վերը), ուստի ակներև է, որ անկատար կերպի մերգործական բայը շումերերենում խոնարհվում էր անտիպասսիվ մոդերով: Եվ, վերջապես, քանի որ, ինչպես վերը նշվեց, էրգատիվ կառուցվածքում անտիպասսիվի համեմատությամբ ավելի ցցուն կերպով արտահայտված հատկանիշներից է կատարյալ կերպը, ուստի զարմանալի չէ, որ շումերերենում կատարյալ կերպի իմաստը արտահայտվում էր էրգատիվ կառուցվածքի, իսկ անկատար կերպի իմաստը՝ անտիպասսիվ կառուցվածքի ձևերով:

Ինչ վերաբերում է չեզոք սեռի և մերգործական սեռի անկատար կերպի սուբյեկտային շարքերի տարբերություններին, ապա, ինչպես վերը նշեցինք, չեզոք սեռի սուբյեկտը արտահայտվում էր ինսկտիվ սուբյեկտի շարքով, իսկ մերգործական սեռի անկատար կերպի սուբյեկտը՝ ակտիվ: Սակայն, լեզվի զարգացման ակտիվ փուլի համեմատությամբ ինսկտիվ շարքի ցուցիչներն ուղորտը ընդլայնվել էր, ընդգրկելով ոչ միայն վիճակի, այլև անանցողական գործողության սուբյեկտը: Միսթամանակ նեղացել էր ակտիվ շարքի սուբյեկտային ցուցիչների ուղորտը, զիջելով անանցողական սուբյեկտի ուղորտը ինսկտիվ շարքի ցուցիչներին: Դրա արդյունքում ակտիվ շարքի ցուցիչները վերստիվել էին անցողական գործողության սուբյեկտի ցուցիչներին:

Վերը շարադրվածից հետևում է, որ շումերերենի (մաս ալ լեզուների) split-ը արտացոլում է լեզվի այն վիճակը, երբ բովանդակային փոփոխությունները արդեն հանգեցրել էին նոր տիպաբանության ձևավորման, իսկ ձևական կողմը, ետ մնալով բովանդակայինից, դեռ լիովին չէր ձերբազատվել լեզվի նախորդ վիճակից հատուկ որոշ գծերից:

Այս դատողությունների համատեքստում, հուսով ենք, հստակվեց -e- ձևության դերը մերգործական բայի անկատար կերպի հարացույցում (ակտիվ բայի սուբյեկտի ռեխիտային ցուցիչ), ինչպես մաս ալարգ դարձավ, որ մերգործական բայի ուղորտում կերպի տարբերությունները արտահայտվում էին ոչ թե հատուկ ձևության միջոցով, այլ տարբեր կառուցվածքների կիրառումով (էրգատիվ կատարյալ կերպի դեպքում և անտիպասսիվ՝ սնկատարը):

Ամփոփում. շումերերենը կերպի քերականական կարգ չի ունեցել: Կերպային տարբերությունները արտահայտվել են կամ տարբեր շարահյուսական կառուցվածքների կիրառումով, կամ բառակազմական և բառային միջոցներով (ռեդուպլիկացիա, տարարմատություն):

THE CATEGORY OF ASPECT IN SUMERIAN (Typological Analysis)

The examination of the subject-object pronominal affixes in the Sumerian verb from the viewpoint of contensive typology brought the author to the following conclusions:

1) the prefixes denoting the subject of the transitive perfective conjugation and the object of the transitive imperfective conjugation go back to the markers cross-referencing the near object and are oblique by origin: the suffixes denoting the subject of the transitive imperfective conjugation go back to the active series of personal affixes, while those denoting the subject of the intransitive conjugation and object of the transitive perfective conjugation originate from the inactive series:

2) the correlation between the transitive perfective and intransitive conjugations is that of ergative vs. absolutive, while the transitive imperfective conjugation is to be qualified as antipassive:

3) the vowel *-e-* in the 3rd person sg. transitive imperfective form, counter to M. Yoshikawa's opinion, is interpreted as a personal suffix of the active series, and not as an imperfective marker:

4) the difference in meaning between ergative and antipassive forms (perfective: imperfective) is due to the fact, that the ergative construction signals higher perfectivity as compared with the antipassive construction (cf. P. J. Hopper & S. A. Thomson, see *intra*, note 7).

5) from (3) and (4) it follows that Sumerian had no special morphological devices to denote aspectual differences: instead, they were denoted by syntactical (ergative vs. antipassive) and lexical means (reduplicated or suppletive stems).

ՅԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. St' u M. T. Канева, "Шумерский язык", Санкт-Петербург, 1996, 105 р.ս.:
2. Այս երևույթը մասամբ համեմատելի է տարածական կապերի և նրանց համապատասխանող բայական նախածանցների փոխհարաբերությանը ռուսերենում (հմմ. *отойти от, сойти с, войти в*), այն տարբերությամբ, որ ռուսերենի բայաձևում կրկնվում է նախադասության մեջ գործածված կապը, մինչդեռ շումերերենում ներմարմնավորվում էր/էին ոչ միայն անուղղակի խնդիր/խնդիրների տարածական ցուցիչ(ներ)ը, այլ անուղղակի խնդիր(ներ)ը՝ դերանվանական արտահայտությամբ:
3. Հմմ. բառավերջի *di-ti* և *di* շարք այլ բաղաձայնների սղումը ֆրանսերենում. *chaud, vert, heureux* և այլն:
4. M. Yoshikawa, On the Grammatical Function of *-e-* of the Sumerian Verbal Suffix *-edel-edu(m)*. "Journal of Near Eastern Studies" 27, 1968, 251-261; idem, The Marû and Hamû Aspects in the Sumerian Verbal System, "Orientalia" NS 37, 1968, 401-416:

5. Th. Jacobsen. The Sumerian Verbal Core. "Zeitschrift für Assyriologie" 78/2. 1988. 161-220:
6. Կոնտենսիվ տիպաբանության սկզբունքները. որոնց հիմքում ընկած են Ի. Ի. Մեշլանինովի և նրա դպրոցի լեզվաբանների ուսումնասիրությունները, շարադրված են Գ. Ա. Կլիմովի գործերում, տե՛ս, մասնավորապես, Г. А. Климов, "Очерк общей теории эргативности", М., 1973, его же, "Типология языков активного строя", М., 1978, его же, "Принципы контенсивной типологии", М., 1983:
7. P. H. Hopper & S. A. Thompson. Transitivity in Grammar and Discourse, "Language" 56/2. 1980. 268:
8. P. Michalowski, Sumerian as an Ergative Language, I., "Journal of Cuneiform Studies" 32. 1980. 86-103:
9. Համանման երևույթի հանդիպում ենք մաս էլամերենում, որը կարելի է որակել որպես վաղ մոճինատիվ լեզու՝ ակտիվ տիպաբանության լեզուներին բնորոշ բազմաթիվ հատկանիշներով (տե՛ս M. Khacikjan, "The Elamite Language", Roma, 1998, 63-65).